https://doi.org/10.46991/S&L/2023.95.012

ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ[1]

Նորայր Ավագյան
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս

Ներկայիս վարչական վարույթը կարգավորող օրենսդրությունը հիմնված է մարդու իրավունքների մարդակենտրոնության գաղափարի վրա, ինչը բացահայտելու և ներկայացնելու համար անհրաժեշտ է, առաջին հերթին, անդրադառնալ վարչական վարույթի սահմանադրահիրավական և միջազգային իրավական հիմքերին: Մեր հետազոտության խնդիրներն ու նպատակներն առավել ևս կանխորոշում են դրանց անդրադառնալու պարտադիրությունը, քանի որ դրանք ուրվագծում են առանձին տեսակի վարչական վարույթների ու դրանց առանձնահատկությունները, և կարելի է ասել, որ հանդես են գալիս որպես չափորոշիչներ: Վարչական վարույթի սահմանադրական և միջազգային իրավական կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ծագումնաբանորեն փոխկապակցված են և սերում են գաղափարական միևնույն արժեքներից: Մեր այս դատողության համար հիմք է հանդիսացել նախորդ դարի երկրորդ կեսին ձևավորված «Լավ կառավարման» (Good governance) հայեցակարգը՝ որպես այնպիսի երևույթ և պայմանների ամբողջություն, որն ազդեցություն է ունենում խնդրո առարկա իրավակարգավորումների (խոսքը վարչական վարույթը կարգավորող իրավանորմերի մասին է) բովանդակության ձևավորման և դրանց իրացման (իրավակիրառման) վրա: «Լավ կառավարման» հայեցակարգն ամփոփվում է այնպիսի հիմնարար սկզբունքներում, որոնք ամրագրված են միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում (բանաձևեր, հանձնարարականներ, պայմանագրեր): Դրանք միավորում են վարչական վարույթների համար պարտադիր մի շարք իրավունքներ, կանոններ ու հիմնադրույթներ՝ նպատակ ունենալով ապահովել իրավունքի գերակայությունը, ընթացակարգային արդարությունը և վարչական ընթացակարգի արդյունավետությունը[2]:

Պետք է արձանագրել, որ «Լավ կառավարման» հայեցակարգի հիմքում ընկած սկզբունքներին հետևելը կարող է նպաստել հանրային իշխանության բոլոր մարմինների նկատմամբ քաղաքացիների վստահության բարձրացմանը, ընդ որում այդ սկզբունքներին հետևելը, դրանք պահպանելը երկակի բնույթ ունեն և նպաստում են մի կողմից հասարակության շրջանում «Լավ կառավարման» վերաբերյալ ընդհանուր ընկալումների ձևավորմանը, իսկ մյուս կողմից հանրային իշխանության մարմինների հաշվետու, թափանցիկ և արդյունավետ գործելուն, ուստի դրանց հավատարիմ մնալու պարտականությունը մեծ հաշվով դրված է պետական իշխանության բոլոր մարմինների վրա:

«Լավ կառավարման» հայեցակարգից է բխում նաև այն, որ մարդու և քաղաքացու պահանջմունքների, իրավունքների և օրինական շահերի իրացման, պահ-

[1] Սույն հոդվածը զեկուցվել է 2022թ. դեկտեմբերի 8-ի ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների գիտական նստաշրջանին:
[2] Տե՛ս **Mirlinda Batalli, Artan Fejzullahu** «Principles of Good Administration under the European Code of Good Administrative Behavior» // Pecs Journal of International and European Law – 2018 – էջ 26-27:

պանության և պաշտպանության ապահովման միջոցը ժամանակակից հասարակությունում հիմնվում է մարդու և քաղաքացու քաղաքական կարևորագույն իրավունքներից մեկի՝ պատշաճ վարչարարության իրավունքի (right to good administration) ճանաչման և երաշխավորված իրացման վրա[1]: Պատշաճ վարչարարության իրավունքի՝ որպես «Լավ կառավարման» հայեցակարգից բխող հիմնարար իրավունքի ձևավորմանն ու կայացմանը նպաստել են միջազգային մի շարք իրավական փաստաթղթեր, ինչպիսիք են՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 28 սեպտեմբերի 1977 թվականի թիվ 77 (31) բանաձևը[2], Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 11 մարտի 1980 թվականի «Վարչական մարմինների հայեցողական լիազորությունների կիրառման վերաբերյալ» թիվ 80 (2) հանձնարարականը[3], Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 18 սեպտեմբերի 1984 թվականի «Հանրային պատասխանատվության վերաբերյալ» թիվ 84 (15) հանձնարարականը[4], Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 17 սեպտեմբերի 1987 թվականի «Մեծ թվով անձանց վրա ազդեցություն ունեցող վարչական վարույթների վերաբերյալ» թիվ 87 (15) հանձնարարականը[5], Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 09 սեպտեմբերի 2003 թվականի «Վարչական իրավունքի բնագավառում վարչական և դատական որոշումների կատարման վերաբերյալ» թիվ Rec(2003)16 հանձնարարականը[6], ինչպես նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 20 հունիսի 2007 թվականի «Պատշաճ վարչարարության վերաբերյալ» թիվ CM/Rec(2007)7 հանձնարարականը[7]:

Միջազգային նշված իրավական փաստաթղթերի համալիր վերլուծությունը վկայում է այն մասին, որ սրանք փաստորեն կարող են հանդես գալ որպես ղեկավար և ելակետային նշանակության սկզբունքներ, ինչու ոչ՝ հենց որպես չափորոշիչներ իրավական պետությունում ընդհանրապես հանրային իրավունքին և հատկապես կառավարչական հարաբերություններին առնչվող պատշաճ որակի թե՛ օրենսդրության ձևավորման, թե՛ իրավակիրառման (իրավահրացման) համար:

Մաաստրիխտի համալսարանի դասախոսները նշում են, որ վարչական մարմնի լիազորությունների հնարավոր չարաշահումների կանխարգելման անհրաժեշտությունն է հենց պայմանավորել վարչական իրավունքի ընդհանուր սկզբունքների էվոլյուցիան: Այս սկզբունքների առաքելությունն է վերահսկել վարչական մարմնին, վարչական գործողությունների համար նախատեսել սահմաններ և ապահովել վարչական լիազորությունների չարաշահման դեմ համընդհանուր կիրառելի երաշխիքներ[8]:

Ընդհանուր առմամբ իրավունքի սկզբունքները՝ որպես հիմնարար, առանցքային իրավական դրույթներ, ցանկացած իրավական համակարգի անբաժանելի մասն են և ունեն առանձնահատուկ առաքելություն: Ըստ գերմանացի վարչագետ Կարլ-Պետեր Զոմերմանի՝ վարչական իրավունքի (վարչարարության) հիմնարար

---

[1] Տե՛ս **Петров А. Ю.** «Право на хорошее управление» (right to good administration): традиции и современность, Вестник ЮУрГУ, серия «Право», Том 13, N 3 (2013), էջ 88, էլեկտրոնային հղումը՝ https://cyberleninka.ru/article/n/pravo-na-horoshee-upravlenie-right-to-good-administration-traditsii-i-sovremennost/viewer :

[2] Տե՛ս https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=090000 16804dec56:

[3] Տե՛ս էլեկտրոնային հղումը՝ https://rm.coe.int/cmrec-80-2-concerning-the-exercise-of-discretionary-powers-by-administ/1680a43b39:

[4] Տե՛ս էլեկտրոնային հղումը՝ https://rm.coe.int/16804e3398:

[5] Տե՛ս էլեկտրոնային հղումը՝ https://rm.coe.int/cmrec-87-16-on-administrative-procedures-affecting-a-large-number-of-p/1680a43b59:

[6] Տե՛ս https://search.coe.int/cm/Pages/result_details. aspx?ObjectID=09000016805df14f:

[7] Տե՛ս https://rm.coe.int/cmrec-2007-7-of-the-cm-to-ms-on-good-administration/16809f007c:

[8] Տե՛ս **Hage, J., Waltermann, A., & Akkermans, B.** (Eds.). (2017). Introduction to Law. doi:10.1007/978-3-319-57252-9, էջեր 210-211:

սկզբունքները կատարում են չորս հիմնական գործառույթ. վարչարարության հիմնարար սկզբունքներն ամենից առաջ լրացնում են իրավունքի բացերը՝ ինչպես քաղաքացիական իրավունքում, սակայն միևնույն ժամանակ որոշակիորեն գործում է նաև քրեական իրավունքին հայտնի «nulla poena sine lege» սկզբունքը: Սա բացատրվում է նրանով, որ իրավունքի բացի պայմաններում վարչարարության հիմնարար սկզբունքները երբեք չպետք է մեկնաբանվեն որպես անձանց իրավունքները սահմանափակող և/կամ նրանց համար պարտականություններ ստեղծող վարչարարություն իրականացնելու իրավական հիմք, այլ բացառապես պետք է ծառայեն որպես վարչական մարմինների գործունեությունը սահմանափակող իրավական դրույթներ:

Ըստ Զոմերմանի՝ վարչարարության հիմնարար սկզբունքների երկրորդ գործառույթը վարչարարության ունիֆիկացումն ու միատեսակության ապահովումն է, քանի որ հիմնարար սկզբունքները, գործելով վարչարարության բոլոր ոլորտներում, հասարակության համար պետական կառավարումը դարձնում են ավելի կանխատեսելի, ինչը հիմք է ստեղծում իրավական անվտանգության և իրավական որոշակիության ապահովման համար:

Երրորդ գործառույթը, որը նշում է գերմանացի վարչագետը, այն է, որ սկզբունքները հանդես են գալիս որպես վարչական մարմինների գործողությունների ուղենիշ: Նշված գործառույթն, առաջին հերթին, արտացոլվում է վարչական հայեցողության առկայության դեպքում, երբ սկզբունքները ծառայում են հայեցողական լիազորությունների մեկնաբանման և իրականացման չափանիշներ: Բացի այդ, վարչական մարմինների գործողությունները պետք է համահունչ լինեն հասարակության նպատակներին, իսկ կոնկրետ լիազորություններ իրականացնելիս փոխհամատեղելի լինեն միմյանց հետ, այսինքն՝ համակարգված:

Ի վերջո քանի դեռ կառավարման մարմինների գործունեության հիմքում ընկած են վարչարարության հիմնարար սկզբունքները, այն կհամարվի օրինական, իսկ եթե լինեն վարչարարության հիմնարար սկզբունքներից շեղումներ, ապա օրինականության հետ խնդիր կունենանք: Այս կերպ էլ գերմանացի վարչագետը ընդգծում է վարչարարության հիմնարար սկզբունքների չորրորդ գործառույթը[1]:

Ռուս պրոֆեսոր Դավիդովը ընդգծում է վարչարարության սկզբունքների հետևյալ գործառույթները.

1) «Նախապարտաստող գործառույթ», այսինքն՝ մինչև վարչական ընթացակարգերի վերաբերյալ օրենսդրական ակտի ընդունումը վարչարարության սկզբունքները կանխորոշում են օրենսդրին և ձևավորում են կարգավորման համապատասխան հիմքեր:

2) Ապահովում են վարչական ընթացակարգերին վերաբերող օրենսդրության ունիվերսալությունը՝ դուրս գալով կոնկրետ օրենքի շրջանակներից և ընդգրկելով վարչական ընթացակարգերի ամբողջ համակարգը:

3) Նպաստում են վարչական ընթացակարգերի իրավական և ոչ իրավական սկզբունքների հավասարակշռմանը:

4) Հավասարակշռում են հանրային և մասնավոր շահերը, այդ թվում՝ մի կողմից ապահովում են մասնավոր անձանց իրավունքների և շահերի պաշտպանությունը հանրային իշխանության չարաշահումներից և մյուս կողմից վարչակազմին՝ մասնավոր անձանց անազնվությունից:

[1] Տե՛ս **Karl-Peter Sommermann**, Prinzipien des Verwaltungsrechts, в: von Bogdandy/ Cassese/ Huber (Hrsg.), Handbuch Ius Publicum Europaeum, Bd. V: Verwaltungsrecht in Europa: Grundzüge, C.F. Mueller Verlag: Heidelberg 2014, 61-64 էջեր:

5) Հայեցողական լիազորությունների իրականացման իրավաչափության գնահատման, ինչպես նաև անալոգիայի կիրառման միջոցներ են[1]:

Մի խումբ վարչագետների կարծիքով՝ վարչարարության հիմնարար սկզբունքները հանդես են գալիս ցանկացած տեսակի վարչարարության նորմատիվ ուղենիշներ՝ կիրառվելով այն դեպքերում, երբ բացակայում են կոնկրետ իրավակարգավորումներ: Բացի այդ, դրանք նաև հանդես են գալիս որպես անձանց սուբյեկտիվ իրավունքներ[2]:

Մեր հիշատակած միջազգային իրավական փաստաթղթերը բովանդակում են այնպիսի կարևոր, հիմնարար, ելակետային ու ղեկավար հանձնարարականներ, որոնք ծառայում են որպես նորմատիվ ուղենիշներ վարչական վարույթը կարգավորող օրենսդրության ձևավորման և իրավակիրառման (իրավահիրացման) համար: Դրանք վերաբերում են պետություններին վարչարարության ոլորտում իրենց ազգային իրավական համակարգերը այնպիսի հիմնարար սկզբունքներով ուղղորդելուն, որոնք հարկավոր է՝ իրացվեն լավ և արդյունավետ կառավարման պահանջների պահպանմամբ, առնչվում են վարչական մարմինների հայեցողական լիազորությունների կիրառման սահմաններին, վարչական որոշումների պարտադիր կատարմանը և այլն:

Սակայն ողջ վերոգրյալը վկայում է այն մասին, որ այդ ուղենիշները ըստ էության միտված են վարչարարության արդյունավետության և անձանց իրավական պաշտպանության երկու կարևորագույն սկզբունքների իրացմանը, և ինչպես իրավացիորեն նշում է Դենիս Գալիգանը, ժամանակակից իրավական համակարգերում վարչարարությունը կառուցված է արդյունավետության և անձանց իրավական պաշտպանության երկու սկզբունքների հիման վրա[3]:

«Աջակցություն ղեկավարման և կառավարման բարելավմանը» (ՍԻԳՄԱ) նախաձեռնության շրջանակներում «Վարչական ընթացակարգերը և վարչական վերահսկողությունը Հունգարիայում, Լեհաստանում, Բուլղարիայում, Էստոնիայում և Ալբանիայում» խորագրով զեկույցում պրոֆեսոր Դենիս Գալիգանը կրկին պնդում է, որ վարչական ընթացակարգերի տարբեր նպատակներից առանձնանում են հատկապես երկուսը. Առաջինը վարչական մարմիններին աջակցելն է կառավարության առաջադրած խնդիրների իրականացման գործում, որը կարելի է անվանել արդյունավետ կառավարում, իսկ երկրորդը՝ վարչական մարմինների գործողություններից և որոշումներից անձանց պատշաճ ու արդարացի իրավական պաշտպանություն տրամադրելն է, այսինքն՝ անձանց իրավական պաշտպանությունը[4]:

Հարկ է նկատի ունենալ, որ վերը նշված երկու սկզբունքները՝ վարչարարության արդյունավետությունը և անձանց իրավական պաշտպանությունը, գործնականում մեկը մյուսին հակադրվելու բավականին մեծ հնարավորություն և միտվածություն ունեն, որպիսի իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է պետության իրավական համակարգում հաստատել վերոգրյալ սկզբունքների այնպիսի ող-

---

[1] Տե՛ս **Давыдов К. В.** Принципы административных процедур: сравнительно-правовое исследование // Актуальные вопросы публичного права. 2015. № 4 (34). - էջ 18:

[2] Տե՛ս **Թովմասյան Հ., Լուխթերհանդթ Օ., Մուրադյան Գ., Պողոսյան Վ., Ռայմերս Վ., Ռուբել Ռ.,** «Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք», Եր., Բավիղ, 2011- էջ 180-182:

[3] Տե՛ս **Galligan D. J.**, Due Process and Fair Procedures: A Study of Administrative Procedures, Oxford, Clarendon Press, 1996, - էջ 128:

[4] Տե՛ս «Աջակցություն ղեկավարման և կառավարման բարելավմանը» (ՍԻԳՄԱ) նախաձեռնության շրջանակներում «Վարչական ընթացակարգերը և վարչական վերահսկողությունը Հունգարիայում, Լեհաստանում, Բուլղարիայում, Էստոնիայում և Ալբանիայում» խորագրով զեկույցը, էլեկտրոնային հղումը՝ https://www.oecd-ilibrary.org/docserver/5kml6198lvkf en.pdf?expires=1657227776&id=id&accname=guest&checksum=C52CB282AD1D0E9550B30F 7B793A2D91:

ջամիտ հավասարակշռություն, որը թույլ կտա մի կողմից երաշխավորել մարդու իրավունքների պաշտպանությունը, իսկ մյուս կողմից՝ ապահովել հանրային վարչակազմի պատշաճ կենսագործունեությունը: Վարչարարության արդյունավետության սկզբունքը մշտապես հակազդեցության մեջ է անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության սկզբունքի հետ, ուստի ոլորտը կարգավորող իրավական դաշտի բարելավման համար անհրաժեշտ է ամենից առաջ հստակ սահմանել վարչարարության արդյունավետության և անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության սկզբունքների հավասարակշռման անհրաժեշտությունը, այլ կերպ՝ հարկավոր է նկատի ունենալ, որ արդյունավետության և անձանց իրավական պաշտպանության սկզբունքները ոչ թե հակադրվեն միմյանց, այլ վարչարարական գործընթացները կարգավորող օրենսդրությունում դրանք պետք է համադրվեն, ինչից էլ հետևում և բխում է, որ 1) իրավական պետության պարտականությունն է յուրաքանչյուր առանձին տեսակի վարչական վարույթի իրավասահման (իրավաստեղծ) գործընթացում առաջնորդվել այն հայեցակարգով, որ նախատեսվող իրավակարգավորումների հիմքում պետք է դրված լինեն արդյունավետության և անձի իրավական պաշտպանության սկզբունքները՝ դրանց իրացումը երաշխավորելով համապատասխան կառուցակարգերով ու ընթացակարգերով և 2) առանձին տեսակի վարչական վարույթն իրականացնող իրավասու մարմնի պարտականությունն է իրավակիրառ գործընթացում ողջամտորեն հավասարակշռել վարչարարության արդյունավետության և անձի իրավական պաշտպանության սկզբունքների համատեղ իրացումը**:** Ամփոփ կարելի է նկատել՝ առանձին տեսակի վարչական վարույթ և դրա առանձնահատկություններ նախատեսելու իրավաչափ նպատակը այդ ոլորտում արդյունավետ իրավական միջոցի և անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության կառուցակարգերի բարելավումն է, ընդ որում վարչական վարույթի առանձնահատկություններ սահմանելիս անհրաժեշտ է պահպանել վարչարարության արդյունավետությանը և անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանությանը ծառայող կարգավորումների միջև ողջամիտ հավասարակշռությունը: Վերջինս կերաշխավորի առանձին տեսակի վարչական վարույթներում մարդու իրավունքների մարդակենտրոն տեսության վրա հիմնված իրավական կյարգավորումներ ունենալը:

Այսպիսով, սույն հետազոտության արդյունքում կարող ենք արձանագրել, որ

1) առանձին տեսակի վարչական վարույթների առկայությունն ունի երկակի նպատակ. (1) վարչարարության առանձին ոլորտներում հանրային իշխանության գործառույթների իրականացման արդյունավետության ապահովումը, և (2) վարչարարության առանձին ոլորտների մասնակից ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների ու ազատությունների երաշխավորված իրացման ու պաշտպանության ապահովումը: Վարչական վարույթի կառուցվածքային կամ ընթացակարգային հատուկ կանոնները իրավական համակարգում պետք է միաժամանակ կատարեն վերոգրյալ երկու գործառույթները:

2) Առանձին տեսակի վարչական վարույթ և դրա առանձնահատկություններ նախատեսելու իրավաչափ նպատակը հանրային իշխանության գործառույթների իրականացման առանձին ոլորտում վարչարարության արդյունավետությունը և անձանց իրավունքների ու ազատությունների պաշտպանության կառուցակարգերի բարելավումն է, այդ թվում՝ վարչարարության առանձին ոլորտներում իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոցի գոյության ապահովումը:

3) Իրավական պետության պոզիտիվ պարտականությունն է յուրաքանչյուր առանձին տեսակի վարչական վարույթի իրավասահման (իրավաստեղծ) գործընթացում առաջնորդվել այն հայեցակարգով, որ նախատեսվող իրավակարգավորումների հիմքում պետք է դրված լինեն արդյունավետության և անձի իրավական

պաշտպանության սկզբունքները՝ վերջիններիս իրացումը երաշխավորելով համապատասխան կառուցակարգերով ու ընթացակարգերով:

4) Առանձին տեսակի վարչական վարույթն իրականացնող իրավասու մարմնի պոզիտիվ պարտականությունն է իրավակիրառ գործընթացում ողջամտորեն հավասարակշռել վարչարարության արդյունավետության և անձի իրավական պաշտպանության սկզբունքների համատեղ իրացումը:

SOME MAIN ISSUES ASSOCIATED WITH CERTAIN TYPES OF ADMINISTRATIVE PROCEEDINGS

Norayr Avagyan
Lecturer at the YSU Chair of Constitutional Law

The article includes valuable opinions on important theoretical and practical issues regarding administrative proceedings. The author has emphasized that in order to improve the legal framework, it is first necessary to clearly define the need to balance the principles of the efficiency of administration and the protection of the rights and freedoms of individuals. As a result, the author concluded that

1) the existence of separate types of administrative proceedings has a dual purpose. (1) ensuring the effectiveness of the implementation of public authority functions in individual spheres of administration, and (2) ensuring the guaranteed realization and protection of the rights and freedoms of individuals and legal entities participating in individual spheres of administration. The special structural or procedural rules of administrative proceedings in the legal system must fulfill the above two functions at the same time.

2) The legitimate purpose of providing for a specific type of administrative procedure and its features is the efficiency of administration in a specific area of public authority implementation and the improvement of structures for the protection of rights and freedoms of individuals, including ensuring the existence of an effective means of protection of rights in individual areas of administration.

3) It is the positive duty of the legal state to be guided by the concept that the principles of efficiency and legal protection of the person should be laid at the basis of the legal regulations, guaranteeing the realization of the latter with appropriate structures and procedures.

4) It is the positive duty of the competent body implementing a particular type of administrative procedure to reasonably balance the joint realization of the principles of administrative efficiency and legal protection of the person in the legal process.

НЕКОТОРЫЕ ОСНОВНЫЕ ВОПРОСЫ, СВЯЗАННЫЕ С ОТДЕЛЬНЫМИ ВИДАМИ АДМИНИСТРАТИВНОГО ПРОИЗВОДСТВА

Норайр Авагян
Преподаватель кафедры конституционного права ЕГУ

Статья содержит ценные мнения по важным теоретическим и практическим вопросам административного производства. Автор подчеркивает, что для совершенствования нормативно-правовой базы, в первую очередь, необходимо четко определить необходимость баланса принципов эффективности управления и защиты прав и свобод личности.

В результате автор пришел к выводу, что:

1) существование отдельных видов административного производства имеет двоякое назначение: (1) обеспечение эффективности реализации функций публичной власти в отдельных сферах управления и (2) обеспечение гарантированной реализации и защиты прав и свобод физических и юридических лиц, участвующих в отдельных сферах управления. Специальные структурные или процессуальные правила административного производства в правовой системе должны выполнять две вышеуказанные функции одновременно,

2) легитимной целью установления конкретного вида административного производства и его особенностей является повышение эффективности управления в конкретной сфере осуществления государственной власти и совершенствование структур защиты прав и свобод личности, в том числе обеспечение наличие эффективных средств защиты прав в отдельных сферах администрирования.

3) правовое государство обязано руководствоваться тем, что в основу правовых норм должны быть положены принципы эффективности и правовой защиты личности, гарантирующие реализацию последних соответствующими структурами и процедурами.

4) обязанность компетентного органа, осуществляющего тот или иной вид административного производства, разумно сбалансировать совместную реализацию принципов административной эффективности и правовой защиты лица в судебном процессе.

Բանալի բառեր – *առանձին տեսակի վարչական վարույթ, առանձնահատկություն, չափորոշիչ, համընդհանուր սկզբունք, վարչարարության արդյունավետություն, սկզբունքների հավասարակշռություն, մարդակենտրոն տեսություն*
Keywords: *certain types of administrative proceedings, peculiarity, criteria, universal principle, administration efficiency, balance of principles, human-centered theory*
Ключевые слова: *отдельные виды административного производства, особенность, критерии, универсальный принцип, эффективность администрирования, сбалансированность принципов, человекоцентричная теория.*